



# Ա Բ Ա Բ Ա Տ Տ

ԹԻՒ ԺԲ. — ՇԲԶԱՆ ԺԲ.

ՏԱՐԻ ԺԲ. — ԴԵԿԱՏԵՄ. 1.

## ՄԱՐԴԻՄ ՔԱՇԱԾՆԵՐԸ ՄԵՂԱԽՈՐ ՁԵՂԱԾ ՏԵՂԻ:

Ոչ մի բանի վերայ մարդ այնչափ չէ ցաւում, ոչ մի ժամանակ մարզիս մեղկը այնչափ չէ գալիս ուրիշին, քան թէ այն ժամանակ, երբ տեսնումենք մի հրեշտակի նման անմեղ, արդար երեխայ, որ երեկ վարդի նման մեր աւքի առաջին կանգնած էր, յանկարծ այնպէս հիւանդացել է, որ անկողնին մէջ տուպակվումէ քաշած սաստիկ ցաւիցն։ Նորա փոքրիկ մահիճի մօտ նստումենք սաստիկ անհանգիստ ու տիսուր սրտով՝ վախը փորներումն, ու ոչ մի բան ձեռներից չէ գալիս, որ անէինք կամ նորա սաստիկ տաքութիւնը կտրելու, որ կրակի նման այրումէ խեղձին, կամ մի կերպով նորա քաշած նեղութիւնն թեթևացնելու, ինչքան ևս լաւ իմանացինք հիւանդ մսիթարելու կերպը, գարձեալ մի օգուտ չունի, որովհետև նա երեխայ է, չէ հասրելու կերպը, գարձեալ մի օգուտ չունի, որովհետև նա երեխայ է, չէ հասկանում։ Ի՞նչի մի այսպիսի երեխայ, որ զեռ ևս աշխարհից տեղեկութիւն չունի, այսպիսի սարսափելի կերպով այս փուչ աշխարհիս դառնութիւններն պիտի քաշէ, ի՞նչի համար նորո զլիսին ևս այսպիսի բան գայ, այսպէս տանջվի, որ զեռ ևս մի մեղք չէ արել։

Նոյն կերպով հարցնումէին երեխմն Քրիստոս մեր Տէրոջն՝ իւր աշակերտներն, երբ որ մօրից կզյր ծնած մի մարզի պատահեցան։ «Արդապետ, ում մեղքն է, զորան թէ իւր հօրն ու մօրն, որ այսպէս է պատահել սուրան։» Նոքա, որ սովորած էն հրեաների հին կերպով զեռ ևս մտածելու ու զատողութիւն անելու այսպիսի պատահմանքի վերայ, ու մարդի ամեն մի քաշած ցաւն, ունեցած հիւանդութիւնը կամ մարմի պակասութիւնը պատիժ կհամարէին մարդիս արած մի վատ բանի համար, այս զիսպուածը պատիժ կհամարէին մարդիս արած մի վատ բանի համար բերել չեն Աստուծու արդարութեան հետ համաձայնեցնել ու յարմար բերել չեն

կարանում, բայց նոցա երկնաւոր Ռւսուցիչն պատասխան տուաւ, թէ ոչ իւր մեղքն է, և ոչ իւր հօրն ու մօրն, ոյլ նոր համար է, որ Աստուծուն էուր ներ յայռնէն:

Աշխարհիս Փրկչի բերանից գուրս եկած խօսք է այս խօսքը և մեղ շատ է մտածել տալիս վերան: Մեզ ևս մեր կեանքի մէջ ինչքան է պատահում, որ ցաւեր ենք քաշում, առանց հասկանալու, թէ մեր որ մեղքի համար է, որովհետեւ Աստուծու ընդգէմ այնպիսի մի բան արած չենք, որ պատժին արժանացած լինէինք: Հատ անգամ ինքներս մեզ հարցնումներ պայպիսի ժամանակ թէ հազարաւոր մարդիկ բաղդաւոր են, լաւ օր են տեսնում, աշխարհիս վայելլութիւններն քաշում, մի՞թէ ես միայն արժանի չէի, մի՞թէ ես նոցանից վատ եմ: Ես նոցանից աւելի՝ մեղաւոր եմ, աւելի՝ արժանի եմ պատժի, ինքն Աստուծած չէ, որ տուել է մեզ կեանքի վայելլութիւններին ցանկացող մեր այս զգայունն սիրտը: Ի՞նչի համար սիրով պիտի կազմեմ այն բանին, որ հաստատ գիտեմ, թէ ձեռիցս պէտք է զնայ ու որբան պիտի ցաւեմ, որ կորցրի: Ի՞նչի է ինձ տուտած այս զգացմունքը ամեն բարի ու գեղեցիկ բանի համար, եթէ որ նորա համար միայն իմ սրտիս մէջ պիտի զարթնի, որ ինձ համար տիրութեան աղբիւր դառնայ: Աւելի լաւ չէր լիներ, որ ես մի ապառած քարի նման անզգայ լինէի:

Դուք կամենումէք ցաւ քաշողին միմիթարել: Նա զիտէ ու հասկանումէ ձեր ասած խօսքերը. զիտէ, որ իւրեան միմիթարել էք կամենում: բայց ձեր ասածները նորա սիրտը չեն հանգստացնում: ձեր խօսքերը լաւ լսումէ, միայն թէ սրտի վերայ այնպէս չեն ներգործում, որ հանդարտի: Եթէ որ իւր մեղքով կորցրած լինէր իւր բաղդաւորութիւնն, ինքն իւրեան մէջ կմտածէր ու կասէր թէ, ոչ ոքին մեղաւոր բռնելու տեղ չունիմ, ինքս եմ մեղաւորը: Բայց ի՞նչպէս անենք, երբ որ մենք մեղաւոր չեղերս այն բանից պէտք է զրկվինք, ինչ որ մեր բաղդաւորութիւնն էր. երբ որ չարահոգի մարդիկը մեր տան հանգստութիւնն ու խաղաղութիւնը իտովումն ու բոլորովին խանգարում, մեզ մեր լաւ կեանքից ու ապրուսից զրկում, մեզ սև սրտով նստեցնում, մէկ խօսքով, մեր տունը քանդում: — կամ, երբ որ մի ձախորդութիւն, որից ազատվելու ճարն ու հնարը չենք գտնում, մեր ունեցած շունեցածիցն մեզ զրկումէ, տարիներով մեր պահածն ու յետ ձգածը մեր ձեռից հանում, ու մեղ տկլոր թողնում, այն տեղը հասցնելով մեզ, որ գոնից գուռն ման զանք, ողորմութիւն հաւաքենք, որ ապրենք: — կամ, երբ որ կաթուածի հիւանդութիւնը մեզ զրկումէ, տարիներով պահածն ու յետ ձգածը մեր ոյժից ու զօրութիւնից, թուլացնելով մեզ ու անպէտքացնելով այնպէս, որ այնուհետեւ որչափ ևս կեանք ունենալու լինինք, մարդկային ընկերութեան մի օգտակար անդամ լինել ամենեին չենք կարողանալու, մարդութիւնից գուրս գալով: — կամ, երբ որ մի մրգի նման մեզ վայր է ձգում մեզ պատահած մի մեծ անբաղդութիւն, որ մեզ համար այնքան մտքից անց կացնելու բան չէր, որ մեր մաշից մի տեղեկութիւն ունէինք, բայց այս փորձանքից ամենեին մի տեղեկութիւն,

Ֆի կարծիք չունեինք:

Կանդիր, գաղարիր, անբազդ ողորմելի մարդ, քո ցաւն կարելի է մեծ լինի ու ասենք, որ յիրաւի մեծ է, բայց քո գանգատներդ ո՞չ քրիստոնէի զանգտառներ են, և ոչ իրաւացի են: Ցաւն, ու ուրախութիւնն, երկուսն ևս մարդիս կպատահի, երկուսն ևս մարդիս հողեն բնութեան մէջ իւն, որովհետեւ այնպէս ստեղծված է, ուրեմն երկուսիցն ևս իւր բաժինն կունենայ. բայց իւր քաշած ցաւի վերայ դատողութիւն պէտք անէ մարդս Աստուծու մեղ տուած բանականութեամբ, որ նոյնպէս կայ մարդիս բնութեան մէջ և որ անհամեմատ բարձր է մեր հողեղին բնութիւնից: Դու չես կարող արտասուբդ բռնել, երբ որ լացդ գալիս է, զու չես կարող արգելել արիւնը, որ վէրքիցդ զուրս է գալիս. բայց քո բանականութեանդ կարող ես հրամայել, որ իւրեան ընդդէմ անարժան բան չանէ: Նորա մէջն է մարդիս ունեցած բանականութեան ոյժը, որ նա մտածէ, թէ ի՞նչպէս պէտք անէ, որ իւր զլիին եկած մեծ անբաղդութիւնիցն աւելի մեծ բաղդաւորութիւն ձեռք բերէ, որովհետեւ աստուածային նախախնամութիւնն չէ կամենաւ, որ մի բան մեր զլիին գայ զուր տեղը, Աստուծուց մեր զլիին եկածը զուր տեղը չգալ, անգատձառ. մի օգտակար խորհուրդ ունին մեղ համար, որ մեղ միայն անհասկանալի է:

Կարծիք շկայ, որ աշխարհիս վերայ անբաղդութիւններ, փորձանքներ, նեղութիւններ, ցաւեր կան, որ մեր զլիին գալիս են և մեր արած մեղքի պատիժ չեն ամեն ժամանակ. բայց և այնպէս Աստուած իւր անհուն իմաստութեամբն ու իւր անքննելի խորհրդովն անօրինումէ մեղ համար, որ այդ մեր քաշելու բաներն մեր բարուն ծառայեն: Սակայն այսօրվան օրս ևս զեռ բաւական կան այնպիսի քրիստոնեաններ, որ Աստուծու վերայ դեռ ևս այն գաղափարն ունին, ինչ գաղափար որ ունեին Հրէաներ իւրեանց ժամանակին ու հին օրէնքին համեմատ. կամենաւմ եմ ասել, որ այժմ ևս զեռ կան այնպիսի քրիստոնեաններ, որ Աստուծուն կճանաչեն պատժող, խիստ գատածատան անող Աստուած, որ հայրերի չարագործութիւնները իւրեանց զաւակներից է հանում մինչև երրորդ ու չորրորդ սերունդը: Այսպիսի քրիստոնեանները հոգով ու մոքով զեռ ևս այնքան չեն բարձրացել, որ ճանաչեն Յիսուսի Աստուածը, որ լի է իմաստութեամբ ու սիրով: Երբ որ յաւիտենական իմաստութիւնն հարկաւոր է համարում մեղ ցաւերին նեղութիւնների վարժատունը տանելու, մեր քաշածներից պէտք սովորենի հելի աւելի հեղ, խոնարհ ու բարեպաշտ լինել: Մեր ամեն քաշած ցաւերը մեղ պատիժներ չեն, բայց մեր քաշածից շատը փորձանք ու փորձութիւններ են, որով մենք փորձվումենք: Այս է պատճառն, որ ամենաառարինի ու ամենաբարեգործ մարդիկը ամենաածանը բաներն են քաշում ու ամենից զժուար բաներն նոցա գլուխն են գալիս: Քրիստոս մեր Տէրոջիցն ևս անմեղ, արդար կար, ու նորանիցն ևս աւելի անարժան անարդանք կրող, նորանիցն ևս աւելի մեծ շարագործի զարհուրելի մահով մեռնելու դատապարտվող կար, եւ իսկ այս նորա ամենաբարդ արիւնն չթափվեցաւ մարդ-

կային ազգի մեծագոյն բարուն համար։ որ Աստվածութեան քորձերն յաշակվելուն

Փորձութիւնը, փորձանկը մաքրող կրակ է, որ պետք պյու այն բնշ որ  
մաքրութ չէ մեր սրտի մեջ և պիտի պողպատի նման պեղացնէ մեր հոգին  
մեր բանականութիւնը լոյսի սուրբ պատերազմերի համար։ Լաւ կեռակը<sup>1</sup>  
երեկը խսկապէս մեծ մարդիկ գուրս չէ բերել ոյլ միշտ անրադգութեան  
նեղութեան վարժառունը միայն Դիտութեան և արհեստի ամենազնիւ հե-  
րոսները մարդկային ազգի ամենաերի ելի բարերարները ընդհանրապէս սար-  
ու ազգատ լիճակի մարդիկներից են դուրս եկել ։ շարաշար աշխատու-  
թեամբ ու նեղութիւններով խրեանց պատանեկութեան օրերն անց կացրել  
երկար ժամանակ կեանքի սասափկ փուշուա ճանապարհով ման եկել ։ շատ  
ու շատ գժուարութիւնների հետ կոփու տուել ։ այն աչազն զժուարու-  
թիւնների հետ որ ապառաժ քարի սարերի նման խրեանց առաջին կանգ-  
նած են եղել ։ շատ անզամ խրեանց պատահած բանից շարաշար կերպով  
խարսին են բայց այս ամենայն բանը նորա համար պէտքէ պատահէր ։ որ  
նաց հոգին աւելի զօրանոյց որ կատարել կարողանան ատառածոյին  
կամքն ու խորհուրդը մարդկային ազգի բարուն համար։

Ով որ առանց իւր մեղքին սարսափելի ցաւեր նեղութիւններ է քա-  
շում։ խրեան պատահած փորձանկի ամենածանր հարուածների տակն աւե-  
լի տրախ սրտով իւր զլուխը պէտքէ վերեւ բարձրացնեւ։ Դրսից մեր զլիսին  
եկած այս փորձութեան հետ չկայ զեռ ևս շատ աւելի տանջաղ ։ այն մեր  
խոյնուանքի յանդիմանութիւնը որ կարիքի նման խոյնելով մարդիս ա-  
սում խրեան թէ քո ցանածն ես հնձում։ Առանց իւր մեղքի փորձանկի  
մեջ ընկնողը կարող է ուրախանալ ։ որ Աստուած խրեան գործիք է ընտ-  
րել աւելի բարձր բանների համար ։ կարող է նաև եմէ այս աշխարհիս մեջ  
Աստուծու արբայտ նեան նուիցն է ընկել ։ պտում կարող է ասում ։  
Քրիստոս մեր Տէրոց այն առաջին աշակերտերի կարգում խրեան ճանա-  
չել ու համարել ։ որոնք արհամարհումնեն անարգանք ու շղթաները ճշմար-  
տութեան սիրոյ համար ։ կարող է նաև Պօղոս առաքեալի հետ մասէ ։ այս  
ժամանակիս քաշաններս արգելք չունին այն փառքի առաջ ։ որ մեր սրտի  
մեջ պէտքէ յայտնիլ ։ Եմէ որ քո գործ կատարելու ասպարէզդ որի  
համար փորձութիւնը քեզ պէտքէ զօրացնէ ։ շատ ընզարձակ ևս չլիներ ։  
Եմէ որ քո ազգականների կամ քո ընտանիքից մեջն ևս լիներ մինչեւ  
անզամ քո խոկ սրտիդ մեջ լիներ ։ որ աւելի մաքրվի ու ազնուանոյ ։  
այն ժամանակ ևս միաբ արա ։ որ մի մարդի միայն հոգու փրկութիւնն ևս  
մի այնպիսի զօրծ է արդէն ։ որի վերաց երկնքի հրեշտակները ուրախութիւ-  
նից թռագում են ։

Քայց անմեղութեամբ փորձանկի մեջ ամեն ընկնողները այս խրատը խ-  
րեանց վերաց չեն ընդունում ։ մեր զլիսին եկածների վարժառանից այս ու-  
սումն չեն առնում ։ Ծատերը բանից գործից ձեռ են վեր առնում ։ խ-  
րեանց օրերը արանջելով անց կացնում ։ կամ սխալվելով օգնութիւն են  
պատում այն աեզր ուր որ պէտք չեր ։ Ով որ ոչ մի բանում մսիթարու-

թիւն գտնել չէ կամենում։ և խելքը միտքը պյանեղ է։ որ իւր առաջվան կորցրած բաղդաւորութիւնը կրկին ձեռք բերէ, զարանով զցոց է տափա իւր անմատութիւնը։ և թէ իւր խելքը աւելի բարձր է։ քան թէ նախախնամաւթեան բժնաստութիւնը պատճառ որ աստուածային իմաստութեան կարքավ ոշնչացաւ իւր երկրաւոր բաղդաւորութիւնը։ Այդ իմաստութիւնն էր որ զարհուրելի բոլորներում նորան սովորեցնել կամեցաւ թէ, ինչ է մարդ և ինչ է ամենայն մարդկային բանը, որ նորան աւելի ուժով քարչէ զեկ ի Աստուած և աստուածայինը ։ Առ էր որ երկրաւոր կեանքի ամենայն խաղերը կամեցաւ նորա հոգու համար կրթող, ուսուցանող խրաներ առնել, որ նորան բարձրացնէ և աւելի բարձր զիրք բոնել տայ որ այն զիրքիցն կարողանայ աւելի լաւ ճանաչել ու հասկանալ այն ամենայն բանի ոշնչութիւնը։ ինչ որ աշխարհիս երեսը կայ որ իւր հոգին նուիրէ իւր կեանքը այն անդին գանձին որ անանցանելի է։

Իրաւ է, մարդին մէջ կայ ձգտումն կեանք զայելելու, առողջ ու լաւ ապրելու, այդ ձգտումն մարզու իւր մանկական հասակից ունի, այս ձրգտումն մեզ հետ միասին մեծ, բաղդաւոր լինելու ջանքը մարդին համար կարիք է զատնում։ Պու հարցնումես. ի՞նչի համար պէտքէ սովորենիք զարձեալ կորցնել այն բանը ինչ որ մեր ստեղծողն ինքն այնպէս սաստիկ սիրել է սովորեցրել, — Բայց նոյն ստեղծող Աստուածը չէ, որ սովորեցրել է ծծի տղային անզամ իւր օրօրոցի մէջ, որ նա մի բոլորովին անհաստատ ու փուչ կեանք ունի, Մանուկն ևս իւր արտասուըն չունի, ինչպէս որ ծերն ունի, Միթէ ամենաերկար ու ամենակարճ կեանքն սկսած օրօրոցից մինչ ի գերեզման մշտական մի խրատ, մի ուսումն չէ, որ կհաստատէ միշտ այն յաւիտենական ճշմարտութիւնը, թէ աշխարհիս երեսին ոչ մի զուարձութիւն և ոչ մի ցաւ մշտական տեսլականութիւն չունի, որ մենք երկուսի մէջն ևս ման ենք զայիս, որ նոցա փոփոխականութիւննեցն սովորենիք երկուսին ևս ևս մեծ բանի անզ չդնելու, որ մենք, որովհետեւ ոչ մինիք և ոչ միւսը վերջապէս մի ճշմարիտ մեզ գոհացնող բան չեն տալիս, այն մորին զանք, թէ մարդին հոգին բոլորովին ուրիշ բաների համար պէտքէ ծնված լինի, և ոչ թէ երկրաւոր պատահմաններից փոփոխական խաղերի համար, Բայց ուր պիտի պատենք մեր սրտի ու հոգու անփոփոխ մշտական և չոչընչանալու ուրախութիւնն ու անզորրութիւնը, եթէ որ մեր կեանքի երկրաւոր հանգամանկներից զուրս չգայ մեզ համար, եթէ որ մեր երկրաւոր կեանքի հանգամանկներից այդպէս չհասկանանք բանը, Մեր հոգու ու սրտի այս անզորը չանգամանեն թիւնների մէջ, որ հումբին պէտքէ պառագան մեր մէջ և այն յարարերութիւնների մէջ, որ ունինք բոլոր աշխարհի հետ, յաւիտենականութեան հետ, մեր Փրկչի հետ ու մեր Երկնաւոր Հօր հետ, Պէտք զանենք մեր հոգու այդ խաղաղութիւնը և մորի անզորութիւնն այն մեր համազմանն մէջ թէ, ամենայն բան տնօրինող ու կառավարող Աստուած անչափ իմաստուն է և անբաւ քարի պէտք գտնենք մեր սուրբ պարտականութիւնների ամենամիշտ կատարմանը

մէջ, այն մեր ջանքին մէջ, որով կյաղթենք ամենայն դժուարութիւններին, նեղութիւններին ու կատարենք ամեն մի առաքինութիւն, որ մարդիս համար անկարելի բան չէ, որովհետեւ առաքինութիւններ գործելու յարմարութիւններով ստեղծված է: Ամենայն բարեբազտութիւններից ամենամքուրն ու մնացականը յառաջ է գալիս միայն այն վսեմ զգացմունքից, որ ունի մարդս իւր մասին, թէ ինքն առաքինի է:

Աւելի մի խոշոր սիալ է այն, որ մարդ կարծումէ թէ, իւր մեղքով յառաջ եկած ցաւին մէջ աւելի հեշտ է մսիթարութիւն գտնել, քան թէ երբ որ մի ցաւ քաշումէ առանց ինքն մեղաւոր իննելու: — Մի՞թէ չգիտես զու, որ աշխարհիս մէջ աւելի զարհուրելի չարիք չկայ. քան թէ մեղքը որ մարդիս ինքն իւրեան աչքից ձգումէ, որ մարդս ինքն իւր պատիւը կորցնումէ իւր իսկ աչքի առաջին:

Ով որ տեսնումէ, որ իւր սրտին սիրելիներից զրկվեցաւ նոցա մահով, իւր ժամանակաւոր բաղդաւորութիւնից, յաջողութիւնից, հարստութիւնից զրկվեցաւ գլխին եկած անբաղդութիւններով, իւր ունեցած պատուից զրկվեցաւ մարդիկների չարութեամբն, այն մարդն զեռ ևս ամենայն բան կորցրած չէ, եթէ որ զեռ ևս ինքն իւր աչքիցն չէ ընկած, ինքն իւր առաջին իւր պատուից չէ ընկած, նա մի սուրբ հպարտութիւն է զգում իւր սրտի մէջ, մտածելով, որ, ինչ որ քաշումէ, ինքն մեղաւոր չէ: Նորա սրտի համար մսիթարութիւն է օտար մարդի կարեկցութեան արտասուքը, նորանով նա հասկանումէ, որ ուրիշներն ևս իւրեան պատուումն: Նորա աղքատութիւնը, նորա անձար մնալն իւր համար մի կերպ յաղթութիւն է: Նա ինքն իւր մէջ ասում է հանգիստ սրտով, Աստուծու կամքն այսպէս էր: Արտաքին մարդը այս ինքն է, մարմով սաստիկ սիրտը կոտըրվումէ անբաղդութիւնից ու ընկնում. բայց ներքին մարդն, հոգին աւելի ուժով է զլուխը բարձրացնում, ուղիղ կանգնում, առաջվանից աւելի բարձր է իւրեան տեսնում: Վերջապէս զաղարումէ դողալուցն իւր զիսին եկած փորձանքի առաջ: Նա զգումէ որ ուշ ու Ուսումնական ավագութեան է:

Մենք մեր կեանքի մէջ, սովորաբար, այն մարդին ենք աւելի սրտանց մեղկանում, որ այնպիսի ցաւեր է քաշում, որոնց արժանի չէր ու պէտք չքաշէր. իսկ այնքան չենք ցաւում այն մարդի վերայ, որ ինքն է պատճառը իւր անբաղդութեանը: Այս ևս իւր բնական պատճառն ունի: Այնտեղ մենք կարեկցութիւն ենք ցոյց տալիս, իսկ այստեղ ընդունումնք գոհ սրտով Աստուծու հատուցանող արդարութիւնը: Մենք մեր տուած դատողութիւնների մէջ աւելի զատաւորի կերպ ենք բանեցնում, ու մինի քաշածը արդար ենք համարում, ուր որ մեղ երեսումէ, որ իւր գործած մեղքի արժանաւոր պատիմն էր, իսկ ընդհակառակն ցաւ է տալի մեր սրտին այն մարդի նեղութիւնն, որ աւելի լաւ վիճակի արժանի էր: Բայց եթէ որ մեր կարեկցութեան աստիճանն մեղ նման մարդի անբաղդութեան բարձր՝ ամ մեծ աստիճանին համեմատ լինէր, այն ժամանակ անտարակոյս մենք

այն մարդի վերայ աւելի կցաւէինք, որ իւր արած մեղքերի մէջն է ախքաշում։ Առեւէ անբարես միշտ և ամեն ժամանակ այդպիսի մարդն է։

Պատճառ որ բաց ի գուրսի մեր տեսած տանջանքից, որ նա քաշումէ, մի ներքին ցաւ ևս ունի, այս այն տանջանքն է, որ իւր խղճմտանքն իւրեան տալիս է։ Վրգոված իւր ընդդեմ թէ, ի՞նչի համար այս մեղքը գործեցիր, որ այդ սարսափելի ցաւերն քաշէիր, անմեղ մարդը այսպիսի ցաւ չէ զգում։ Բայց մեղաւոր մարդը, ինչ որ գուրսը ունէր իւր համար թանկագին, կորցրեց։ սակայն մենակ այս չէ կորցրածն—նա իւր սեփական արժեքն, արժանաւորութիւնն, ինչպէս ասենք, իւր ամենալաւ բանը, ինքն իւրեան կորցրեց։ Ամենամեծ և ամենից աւելի տանջող ցան այս է։ Նա իւր քաշած ցաւերն մի յաղթութիւն չէ համարում։ այլ իւր արած վատ գործերի և իւր վատութեան հետեւանքն, նա հոգու մեծութիւն ցոյց տալ չէ կարող, այլ աներեսութեամբ միայն կարող է այնպէս ցոյց տալ, իրը թէ բանի տեղ չէ դնում իւր քաշած ցաւերն։ Բայց այսպէս ձեւացնելն ու ինքն իւրեան այսպէս ցոյց տալն մի դառն ստիպանք է ու մի նոր տանջանք իւր համար։ Միշտ նորա մէջ ասումէ խղճմտանքը թէ, ես ինքս եմ պատճառը իմ՝ այսպիսի վիճակի մէջ գտնվելուու։ աւելի բաղդաւոր կլինէի, եթէ որ աւելի լաւ լինէի։ Մինչև իւր բարեկամների իւրեան ցոյց տուած ցաւակցութիւնը շատ անգամ իւր համար մի տանջող բան է դառնում, որովհետեւ չէ կարողանում շմտածել։ որ նորա իւրեանից լաւ են։

Աւրեմն միմիթարվիր ով սիրտգ կոտրված մարդ։ քո սրտիդ թեթևութիւն լինի այն միտքը, որ քո վերայ եկած ձախորդութիւնը, փորձանքը քո մեղքիցն չէր։ Քո նեղութիւնը Աստուծու գործն է։ չես կարող ընդդեմ կենալ, պիտի ընդունիս Աւրեմն սիրտ առ, քո նեղութեանդ մասին հոգու ևս Աստուծու բանն է և կլինի, նորա զօրութիւնն ու օգնութիւնը շատ ու շատ է։ Նա քեզ համար բարիք կյառաջացնէ այն բանից, ինչ որ գու քեզ համար անհատնելի ցաւի ու հոգսի աղբիւր ես համարում։

Բայց զու ևս այժմ Աստուծուն մի թողներ, պինդ բռնիր նորա քղանցքը, այն ժամանակ միայն նա քեզ ոտի կկանգնեցնէ հզօր ձեռով։ Մեծ բանի տեղ մի դներ երկրաւոր բաների մէջ կորցրածդ։ այն ժամանակ միայն կտեսնես զու թէ ի՞նչքան բարիք բան զեռ ևս մնացել է քո սրտիդ համար կտեսնես որ քո անրադրութեանդ սարսափելի օրը քո ներքին պայծառութեան սկիզբն է եղել քեզ համար, որ զու նոր ես հասկանում։ Պատճառ որ աշխարհայինը, անցաւորը, որ մինչև ցայժմ քեզ համար ամենասիրելի բան էր, քո վերայիցդ ընկաւ, որ քեզ ցոյց տայ, թէ զու այսուհետեւ միմիայն աստուածային ու յաւիտենական բանի ետելիցն պիտի լինիս։ Այսպէս քո կեսանքիդ վերջին ժամին վերջապէս կընկնի քո վերայից ամեն բան, որ քո պայծառանալդ կատարեալ լինի։

Քանի կինաս, սուրբ պահես քո սիրտ ու հոգիդ ազնուութեան, Ճըմարտութեան, քաջութեան, մարդասիրութեան մէջ և ամենայն աստուածային ու բարեպաշտական մտքերի մէջ։ Այն սխալանքները քեզանից հե-

առ պահից, որ քո բարի ճանապարհի մէջ լինելու արգելք են լինում։ Աստուծու որդի որ դառնաս, չես կորչիր, որովհետեւ երկնքի ու երկրի Տէրը քո հայրդ կլինի։

Հատ ու շատ անգամ, մեղ անբաղդութիւն, փորձանք պատահած ժամանակը, սաստիկ ցաւած ու կոտրած սրտով ասումնենք. անքննելի անհասկանալի են Աստուծու ճանապարհները Լաց լինող մայրը իւր հիւանդ տղայի անկողնի մօտ գեռ ևս չէ հասկանում, թէ այդպիսի զեռ ևս անմեղ ու մաքուր հոգուն այդշափ չարշարանք քաշելն ի՞նչի համար էր։ Բայց այս ցաւն ևս մի չար պատահմունքից չէր. երկնաւոր Տէրոջ ձեռի գործն էր. Մի օր այս և այսպիսի մութ ու գծուարին հանելուկները զարմանալի կերպով կպարզվին, կը յայտնիին. մի օր, արդէն այս աշխարհիս մէջն է եղել, թէ միայն միւս աշխարհի մէջ, ամենայն բան կատարեալ կերպով պէտքէ հասկանանք։ Ա. Դ. Ե. Հ. Խ. Ե. Վ. Վ. Վ.

Խարդարութեան։

Գ. Ե. Ա. Ա.

### Գ. Հետանդաբնիւ նոյնի բնաջնջելը — օդի ու ուշացնցիւն։

Արհեստական կերպով օդը մաքրելը հին ժամանակներում ևս գործ էին ածում վարակիչ հիւանդութիւնների դէմ իրրե՛նախաղաշտպանօղական միջոց, որովհետեւ այն ժամանակ քիմիական օդամաքրիչ նիւթերի հետ ծանօթ չէին, այդ պատճառով վարակումից պաշտպանուելու համար քաղաքների հրապարակներում մեծ խարզյներ էին այրում։ XIV դարում երբ Սև ժամանակութ ահազին վեասներ էր անում ամենայն տեղ զարհուրանք և երկիւղ առաջացնելով, Փարիզի բժշկական մասնաբաժնի անդամները — որ այն ժամանակ մեծ ձայն ունեին, — առաջարկեցին ամենայն տեղ խարզյներ այրել խաղողի որթերից, կանաչ գարնուց և այլ թարմ ծառերից։ Այդ տեսակ միջոցներ գործ գնելով ի հարկէ մարդիկ ենթադրում էին, որ օդի մէջ հիւանդարեր նիւթեր կան, որոնք հասարակական առօղջութեան օգտի համար պիտի բնաջնջուէին։ Այժմ ևս մենք միւնոյն հայեցողութեան ենք հետեւում, միայն այն զանազանութեամբ որ թթուելու, նեխուելու, և փտելու գործողութիւնների վերայ արած փորձերը և հետազոտութիւնները, դէզինֆիկցիայի գիտութեան հիմնաւոր գիտնական դրութիւն տուին։ որ առաջուայ ժամանակներում բոլորովին չունէր։ Փորձառական գործերը նմանապէս կանոնաւոր տեղեկութիւնների տուին դէզինֆիկցիայի նշանակութեանը իրբեւ սանիտարական միջոց և հասարակական առողջապահութեան գործիք։ Այժմ հետպհետէ աւելի կարծիք է տարածվում որ դէզինֆիկցիայն բոլոր վարակիչ հիւանդութիւնների տարածման գէմ հանրական եղանակ չէ, և թէ նորա գործազրութիւնը կարող է օգուտ բերել այն ժամանակ միայն, երբ վեասակար նիւթերը մաքրութեամբ լիովին չեն հեռացւում։